Պարոն/Տիկին Լ. Սարգսյանին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Գ. Բաղրամյանին

Տիկին Ն. Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Գ. Բաղրամյան

«02» հուլիսի 2024թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Գործուղվողների անունը, ազգանունը- Ազիզյան Լիանա, Մոմջյան Մարիամ, Ավանեսյան Աննա.

2. Զբաղեցրած պաշտոնը-ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի օգնական (մամուլի քարտուղար), սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի պետ, ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության ֆինանսական վերլուծության բաժնի գլխավոր տնտեսագետ.

3. Գործուղման վայրը և ժամկետները-Սկոպյե, Հյուսիսային Մակեդոնիա, 2024 թվականի հունիսի 24-26-ը.

4. Հրավիրող կողմը (առկայության դեպքում)-Ամերիկայի միացյալ նահանգների հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների անդամների ազգային ասոցիացիա.

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). «Առաջադեմ կին առաջնորդները էներգետիկայում» (AWLE) ծրագրի միջին կարիերայի առաջնորդության զարգացման դասընթացի երկրորդ մասին մասնակցություն.

6. Քննարկված թեմաները (հարցերը).

«Առաջադեմ կին առաջնորդները էներգետիկայում» (AWLE) ծրագրի միջին կարիերայի առաջնորդության զարգացման դասընթացի նպատակը էներգետիկայի բնագավառում գենդերային հավասարության կարևորության մասին իրազեկվածության բարձրացումն էր և կանանց համապարփակ հմտությունների զարգացումը, որոնք կնպաստեն կանանց ընդհանուր առաջնորդական կարողությունների բարելավմանը:

Առանձնակի ուշադրության արժանացան կանանց փափուկ հմտությունների զարգացմանը հարցերը, մասնավորապես, հաղորդակցման հմտություններին, արդյունավետ հետադարձ կապի ապահովմանը, ակտիվ լսողի դերին, դերերի մոդելավորմանը, սոցիալական մեդիայում ներկայացվածությանը, անձնական բրենդինգին վերաբերող հարցերը:

Հաշվի առնելով նշվածը օրակարգում ներառված թեմաներն էին՝

- Կարիերայի պլանավորումը,
- Նպատակների սահմանումը,
- Ծրագրերի կառավարումը,
- Բանակցությունների վարումը (օրինակ՝ աշխատավարձի բարձրացման մասով և այլն)
- Հաղորդակցության հմտությունները և հրապարակային ելույթի խոսքը,
- Հետադարձ կապ տալը և ստանալը,
- Մոտիվացիայի տեսությունը և առաջնորդությունը,
- Պատվիրակումը և որոշումների կայացումը,
- Զգացմունքային ինտելեկտի դերը,
- Անձնական բրենդինգը,
- C.V./ռեզյումեի բարելավումը
- Թիմային աշխատանքը,
- Կնոջ աշխատանքը տղամարդկանցով գերակշռող ոլորտում:

Հանդիպման բանախոսների կողմից ներկայացվեցին այն քայլերը, որոնք կարիերայի պլանավորումը դարձնում են բիզնեսի և աշխատանքի կառավարելի մասը:

Հինգ քայլերն են.

1. Իրավասությունների ինքնագնահատումը,
2. Կարիերայի նպատակի բացահայտումը,
3. Նպատակին ուղղված գործողությունների որոշումը,
4. Գործողությունների ձեռնարկում և առաջընթացի չափումը,
5. Կարիերայի երկարաժամկետ կառավարումը:

7. Հանդիպումները, ելույթները.–Հանդիպմանը հանդես ենք եկել ելույթներով՝ ներկայացնելով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում գենդերային հավասարության ոլորտում առաջընթացը և մասնակիցների փորձը «Առաջադեմ կին առաջնորդները էներգետիկայում» (AWLE) ծրագրի միջին կարիերայի առաջնորդության զարգացման դասընթացում որպես մենթոր և մենթի:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.–

Բարձրացնել մասնակիցների աշխատավայրում կանանց փափուկ հմտությունների կարևորության մասին իրազեկվածությունը և փոխանցել ստացած գիտելիքները:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

Նպաստել գենդերային հավասարությանն առնչվող թեմաներով աշխատաժողովներին կանանց մասնակցությանը:

Գործուղվողներ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի նախագահի օգնական
(մամուլի քարտուղար)_____ Ազիզյան Լիանա

Սակագնային քաղաքականության վարչության
սակագնային բաժնի պետ_____ Մոմջյան Մարիամ

ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման
վարչության ֆինանսական վերլուծության
բաժնի գլխավոր տնտեսագետ _____Ավանեսյան Աննա

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 526-ՀՆ,19.06.2024թ., Հրաման 523-ԳՔ, 18.06.2024թ.**

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի նախագահի օգնական **Լիանա Ազիզյան** ,

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի պետ **Մարիամ Մոմջյան,**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության ֆինանսական վերլուծության բաժնի գլխավոր տնտեսագետ **Աննա Ավանեսյան** :

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք. **Սկոպիե / Հյուսիսային Մակեդոնիա /**

5. Գործուղման ժամկետները՝ **23.06-27.06.2024թ.**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ** և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Լիանա Ազիզյան	Մարիամ Մոմջյան	Աննա Ավանեսյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)				
	Ավիատոմսի արժեքը (դրամ)				-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				
	Օրերի քանակը				
	Ընդամենը (դրամ)				-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				
	Օրերի քանակը				
	Ընդամենը (դրամ)				-
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար				
	Մուտքի արտոնագրի վճար				
	Այլ ծախսեր (*նկարագրել*)				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		-	-	-	-

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 28.06.2024թ.